

«Երևանի Լեռնի անվան N65 ավագ դպրոց»

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման
դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Բայական հարադրությունների ոճական արժեքն
Ակսել Բակունցի պատմվածքներում

Հետազոտող ուսուցիչ՝ Աբրահամյան Քրիստինե

Արարատի ավագ դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....	2
Գլուխ 1.<<Բայական հարադրությունների ըմբռնումը հայ քերականագիտության մեջ>>.....	4
Գլուխ 2. <<Ժողովրդախոսակցական բայական հարադրություններ ոճական արժեքը >>.....	8
Գլուխ 3. <<Դարձվածային բայական հարադրությունների ոճական արժեքը >>.....	14
Գլուխ 4.<< Մենիմաստ և բազմիմաստ հարադիր բայերի ոճական արժեքը >>.....	17
Եզրակացություն.....	21
Համառոտագրությունների ցանկ.....	23
Օգտագործված գրականության ցանկ.....	24

Ներածություն

Հայ արձակի նշանավոր վարպետներից մեկի՝ Ա.Բակունցի ստեղծագործությունը, որը խոր արմատներ է ձգել հայ բազմադարյան գրականության մեջ, բնութագրվում է ոչ միայն թեմատիկ բազմազանությամբ, գաղափարական հարուստ բովանդակությամբ, այլև արտահայտչական ինքնատիպությամբ:

Բակունցն իր պատմվածքներով նոր էջ բացեց հայ գրականության մեջ: Դ.Գասպարյանն այսպես է գնահատել Բակունցի պատմվածքները. «<Լեռնային աղբյուրների պես մաքուր ու թափանցիկ են այդ պատմվածքները, լեռնային մարդկանց բնավորությունների պես պարզ ու հասարակ, բայց հոգեբանորեն խոր ու դրամատիկ, քանի որ այդպիսին է նրանց տեսել ու ճանաչել գրողը>>:¹

Բակունցն իր ստեղծագործություններին շունչ ու ոգի է տվել, ինչպես բրուտագործն իր աշխատանքին: Ոճական հնարքների ճիշտ և նպատակային օգտագործումը ապահովում է գեղարվեստական երկի առավել կարևոր հատկանիշներ՝ պատկերավորություն, արտահայտչականություն և հուզականություն: Հեղինակը ոճական այդ միջոցներից օգտվել է յուրովի՝ անհատական կնիք հաղորդելով դրանց:

Բակունցի հեղինակային խոսքի ժողովրդայնության կարևոր գործոնը հարադրական բայերի առատ գործածությունն է: Հարադրական բայերը հայ ժողովրդական խոսքի ամենաբնորոշ բաղադրիչներն են , հայոց լեզվի ազգային բնույթի գլխավոր հատկանիշներից մեկը:

Սույն ուսումնասիրությունն ունի հետազոտության օբյեկտ, այն է՝ հարադրական բայերը, իսկ հետազոտության առարկան հարադրական բայերի ոճական տարբեր կիրառություններն են: Կատարված հետզոտական աշխատանքի նպատակն է ցույց տալ այն հարադրական բայերի ոճական արժեքը, որոնք մարմավորում են գրողի ասելիքը, նպաստում կերպարների տիպականացմանը, ստեղծում միջավայրի համապատասխան գունավորում:

¹Տես՝ Դ.Գասպարյան , Բակունցի պատմվածքների գեղագիտական աշխարհը, Երևան 1979, էջ 19

Ուսումնասիրությունը կատարվել է նկարագրական – վերլուծական մեթոդով:

Խնդիրներն են հեղինակային ոճին նպաստ բերող լեզվական հիշյալ կարգի երևույթների ամբողջական քննությունը և վերլուծությունը:

Աշխատանքում կատարված ուսումնասիրությունները, վերլուծությունները, եզրակացությունները, հետազոտման արդյունքներն ունեն գործնական նշանակություն:

Սույն հետազոտական աշխատանքը բաղկացած է չորս գլուխներից, եզրակացությունից , համառոտագրությունների ցանկից, օգտագործված գիտական գրականության ցանկից:

Առաջին գլուխը վերնագրված է <<Բայական հարադրությունների ըմբռնումը հայ քերականագիտության պատմության մեջ>>, որտեղ ուսումնասիրվել են բայական հարադրությունների վերաբերյալ հայ քերականագիտության մեջ եղած կարծիքները:

Հիմնարար ուսումնասիրությունները կատարվել են հաջորդ բաժիններում, որոնք առանձնացված են բայական հարադրությունների ոճական հատկնիշներին համապատասխան:

Երկրորդ՝ <<Ժողովրդախոսակցական բայական հարադրությունների ոճական արժեքը >> գլխում անդրադարձել ենք ժողովրդախոսակցական և բարբառային բայական հարադրությունների ոճական տարբեր կիրառություններին Բակունցի պատմվածքներում:

Երրորդ՝ <<Դարձվածային բայական հարադրությունների ոճական արժեքը >> գլխում ուսումնասիրել ենք դարձվածքի և հարադրական բայերի տարբերությանը, ապա դրանց կատարած դերին :

Վերջին՝ << Մենիմաստ և բազմիմաստ բայակն հարադրությունների ոճական արժեքը >> գլխում բազմաթիվ օրինակներով ցույց ենք տվել հարադիր բայերի բազմիմաստ կիրառությունները, դրանց արտահայտած նրբերանգներն ու ոճական կիրառությունները:

Գլուխ 1

Բայական հարադրությունների ըմբռնումը հայ քերականագիտության մեջ

Հայտնի է, որ յուրաքանչյուր լեզու ունի բառակազմության բյուրահատուկ միջոցներ ու եղանակներ: Հայոց լեզուն ևս ունի բառակազմության ուրույն միջոցներ, որոնց կիրառմամբ շարունակ հարստացել և հարստանում են նրա բառապաշարն ու բառային կազմը:

Հարադրությունը մեծ դեր է խաղում հայոց լեզվի բառապաշարի հարստացման գործում: Այն հատուկ է առանձնապես բային: Ինչպես նշում է Ալ. Մարգարյանն իր <<Հայերենի հարադիր բայերը >> աշխատությունում, հայ հին քերականական աշխատություններում հարադրավոր բայերի մասին ոչինչ չի ասվում. այս հարցի ուսումնասիրությունը սկսվում է 17-րդ դարից: Նա նշում է, որ առաջին անգամ հարադրավոր բայերի գոյությունը նկատել է Կղեմնես Գալանտսը:¹

Հարադրավոր բայերի պարզաբանման հարցում մի քանի քայլ առաջ է անցնում Մ. Չամչյանը: Նա ցույց է տալիս, որ գրաբարում կան անկախ կամ ոչ անկախ գործածություն ունեցող մի խումբ բառեր, որոնք, հարադրվելով առանձին բայերի հետ, << վարին իբր մի բայ >>: Նա հարադրավոր բայերը չի դիտում իբրև բայերի մի առանձին տեսակ:²

Ալ. Մարգարյանը նշում է, որ << Նոր հայկազյան բառարան >>-ով հարադրավոր բայերի ուսումնասիրությունը դրվում է նոր աստիճանի վրա: Այն հարադրվոր բայերի

¹Տես Ալ. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 21-23

²Տես Մ. Չամչեանց, Քերականութիւն հայկազեան լեզուի, Ի Տիփլիս, 1826, էջ 191-193

մասին ամբողջական և լայն պատկերացում է տալիս:¹

Խ.Աբովյանն իր «Նախաշաւիդ»-ի սուղ էջերում պատշաճ տեղ է հատկացրել բայական հարադրություններին: Առաջին անգամ հայ լեզվաբանական գրականության մեջ բայական հարադրություններին նա տվել է քերականական որոշակի անուն՝ բարդ բայեր: Նա հատուկ ուշադրություն է դարձրել ժողովրդախոսակցական լեզվում նրանց դերին ու «Վերք»-ում էլ ոչ պատահականորեն հարադրավոր բայերի գործածության օրինակներ է տվել:²

Հարադրավոր բայերին անդրադարձել է նաև Արսեն Այտընյանը: Հարադրաավոր բայերը նա դիտում է ոչ թե իբրև բայական ձևեր, այլ համարում է ոճեր, «ի սովորութենէ որոշ նշանակություն մը առած, երկու բառէ բաղադրութիւն մը, որ միայն հասարակօրէն բայ կը ձևացնէ >>:³ Նա փորձել է բացահայտել գրաբարի, միջին հայերենի և աշխարհաբարի հարադրավոր բայերի միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները:

Ալ. Մարգարյանն ու Ա. Աբրահամյանը նշում են , որ հարադրությունների ուսումնասիրության հարցը գիտական լուրջ հիմքերի վրա է դրել մանուկ Աբեղյանը: Նա առաջինն է տվել «հարադրական բայ >> քերականական անունը: Ըստ Աբեղյանի՝ հարադրական բայերը հատուկ են հայոց լեզվին , կազմվում են բայից և հարադիր բառից: Բայն ու հարադիրը միասին ստանում են մեկ բայի արժեքն հաճախ կարող են փոխարինվել մեկ բառով:

Իրենց աշխատություններում բայական հարադրություններին անդրադարձել են Հովհ. Բարսեղյանը, Ս.Աբրահամյանը, Ա.Աբրահամյանը, Հ.Աճառյանը, Մ.Ասատրյանը և ուրիշներ:

Գ.Սևակը գրում է, որ հարադրական բարդությունների մեծ մասը ստացել է այլաբանական իմաստ և վերածվել դարձվածքի: Նա ցույց է տալիս հարադիր բայերի

¹Տես՝ Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 26

²Տես՝ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1950, էջ 150-153

³Տես՝ Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1886, էջ 318

կազմության բազմազան հարաբերություններ.

- Հարադիր բայեր կազմվում են երկու անկախ բայերից , որոնցից յուրաքանչյուրն առանձին խոնարհվում է ` գնալ-գալ, վեր կենալ գնալ, թռչել գնալ :
- Ներգործական բայից և տալ բայից ` գրել տալ, ծեծել տալ:
- Անել և լինել բայերով ` միտք անել, քուն լինել:
- Մի մասն էլ կազմվում են շարժում ցույց տվող բայերից և տեղ ցույց տվող որևէ բայից:¹

Հովհ. Բարսեղյանն անդրադարձել է հարադիր բայերի խոնարհմանն ու դրանց ժխտական ձևերի կազմությանը ` նշելով, որ ժխտական մասնիկները դրվում են ոչ թե հարադիրի , այլ խոնարհվող բայի վրա: Ջուզաբայական հարադիրների խոնարհման ժամանակ օժանդակ բայը դրվում է այն բաղադրիչի վրա, որի իմաստն է շեշտվում, իսկ ժխտական մասնիկը դրվում է առաջին բաղադրիչից առաջ:²

Հր.Աճառյանը հարադիր բայերն անվանել է բայական ոճեր:Նա հայտնել է այն կարծիքը, որ բայական ոճերը մեծ մասամբ ազդվել են թուրքերենից , ինչպես ` կուլակ ասմակ-ականջ կախել:Այս նույն ճանապարհով են հայերենին անցել ձեռք տալ, ձեռք քաշել, ծխախոտ խմել, հեռագիր քաշել և այլ ոճեր, որոնք թուրքերենից տարբերվում են գործածությամբ և նշանակությամբ:³

Գրաբարյան բայական հարադրություններին անձրադարձել է Ս.Ղազարյանը:

Նա գրում է, որ գրաբարում հարադիր բայեր կազմվում էին արմատի կրկնությամբ ` լլկանս լլկել, շահս շահել, կաքաս կաքաել: Նշվում է նաև, որ հարադիր բարդություններից շատերը հետագայում պարզացել են, ինչպես ` ի գործ ածել-գործածել: Նա գալիս է այն եզրակացության, որ հնուց ի վեր նման բառակապակցություններ տարածված են եղել հայերենում:Նշում է, որ ժամանակակից հայերենի բազմաթիվ իսկական և կցական բարդություններ

¹Տես `Գ.Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան,1955,էջ 161-163

²Տես `Հովհ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն,Երևան, 1953,էջ 322

³Տես `Հր.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի,Հատոր 4, Երևան,1961,էջ 86

կազմված են գրաբարի հարադիր բայերից՝ ակն առնուլ-ակնառու, յանձն առնել- հանձնառու, ակն ածել- ակնածություն:¹

Ա.Աբրահամյանն իր «Բայը ժամանակակից հայերենում» աշխատության մեջ մեծ տեղ է հատկացրել բայական հարադրությունների ուսումնասիրությանը՝ նշելով, որ ժամանակակից հայերենը բազմաթիվ բայական հարադրություններ վերցրել է գրաբարից և իմաստավորել դրանք:Նա օրինակներով ապացուցում է , որ հարադրության հողով և անհող գործածությունը առաջացնում է իմաստային տարբերություններ, ինչպես՝ սիրտ առնել և սիրտը առնել:²

Հարադրական բայերի ոճական հատկանիշներին անդրադարձել է նաև Լ.Հախվերդյանը. «Եթե հարցնեն, թե ինչն է ինձ ավելի շատ դուր գալիս հայոց լեզվում, իսկույն կասեմ՝ հարադիրները:Վերցնում եմ մի գոյական, կողքին դնում եմ մի բայ, և խնդրեմ, հարադիր բայը պատրաստ է՝ վառ, տպավորիչ, պատկերավոր: Եվ զարմանալն այն է, որ հարադիր բայերի մեջ գոյական անունը չես էլ զգում: Հարադիր բայերը խոսքին կենդանի շունչ են հաղորդում: Ջարմանալ կարելի է,թե որքան ուժ, եռանդ են թաքցնում այնքան պարզ ու հասարակ հարադիր բայերը»:³

Կարևոր ենք համարում նշել, որ բայական հարադրությունների ուսումնասիրման գործում մեծ է Ալ. Մարգարյանի « Հայերենի հարադիր բայերը» աշխատության դերը, որտեղ հեղինակը բազմակողմանիորեն քննել է բայական հարադրությունների վերաբերյալ բազմաթիվ տեսակետներ, ապա ինքը տվել իր գնահատականը:

Այսպիսով, հարադիր բայերի քննությունը ցույց տվեց, որ բայական հարադրություններն արժանացել են բազմակողմանի ուսումնասիրության հայ լեզվաբանական մտքի զարգացման տարբեր շրջաններում:

¹Տես՝ Ս.Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1952, էջ 171-172

²Տես՝ Ա.Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962, էջ 157

³Տես՝ Լ.Հախվերդյան, Զրույցներ լեզվի մասին, Երևան, 1982, էջ 140-141

Գլուխ 2

Ժողովրդախոսակցական բայական հարադրությունների ոճական արժեքը

<<Ժողովրդախոսակցական բառաշերտը մեր լեզվի՝ դարերով ձեռք բերած արտահայտչական հարուստ հնարավորությունների դրսևորումն է, որն ունի ընդգծված հուզական երանգավորում, բազմաձև ելևէջներ, կենդանություն և անմիջականություն, ազգային լեզվամտածողության անադարտ ձևեր>>,- այսպես է բնորոշել Լ.Եզեկյանը ժողովրդախոսակցական լեզուն:¹

Բարբառի ոճական օգտագործումը սկիզբ է առնում Թումանյանի ժամանակներից: << Ես այն կարծիքին եմ, որ գրողն իր լեզուն հարստացնելու, կազմելու համար ազատ է օգտվելու եղ բոլոր աղբյուրներից , միայն թե պետք է իմանա շնորհքով, իսելացի օգտվել տեղը գործածել>>:²

Զուգված ու հնչեղ հայերենն ակսելյան էջերում հյուրավորված է ժողովրդական լեզվի տարրերով: Ժողովրդախոսակցական բառերը Բակունցն ավելի շատ գործածում է իր ստեղծագործությունների հեղինակային լեզվին գեղջկական երանգ տալու համար: Հայ գյուղը, նրա ամենաթաքուն անկյունները, գյուղի մարդկանց հոգու թաքստոցները ճշմարտացի արվեստով նկարելու համար Բակունցի վրձինն անընդհատ նորոնոր գույներ է որոնում մեծ մասամբ ամենահարմար գույները գտնում հենց այն մարդկանց խոսքում , ում պատկերում է:

Բակունցի պատմվածքների լեզվում մեծ խումբ են կազմում ժողովրդական-բարբառային բայական հարադրությունները, որոնք հեղինակային խոսքը մոտեցնում են կենդանի խոսակցական լեզվին և պատմվածքի լեզուն դարձնում առավել մտերմիկ: Ժողովրդախոսակցական բայական հարադրություններ Բակունցը շատ է գործածել իր ը հերոսների խոսքում:

¹Տես՝ Լ.Եզեկյան , Ոճագիտություն, Երևան 2003, էջ 170

²Տես՝ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ.4, Երևան 1951, էջ 140

Հեղինակի խոսքը հյուսեղ է, ճոխ, համեմված ժողովրդախոսակցական բայական հարադրություններով: Բերենք մի քանի դիպուկ օրինակ.

- Տաք արյան շիթերը **ցայքուն տվին** կանաչի վրա, բայց հետո արյունը լերդացավ,իսկ կովը չլավացավ:(ԱՄԼ, էջ53)
- Զառի աքիրն էլ մի կողմից էր **կրակին յուղ ածում**:(ԱՄԼ, էջ58)
- Մի գարուն էլ **շուռ տվավ**, և այդ գարնանըքաղաքից հողաչափ եկավ երկու գյուղի սահմանները որոշելու:(ՕՏ, էջ 71)
- Հոգնածին ուրիշ գույգ փոխարինում, վարձկան կանայք անկյունի մթում **ձեն-ձենի են տալիս**, լալիս:(Խդ, էջ 89)
- Առաջ հեշտ էր ձյունը տեղից **ժած տալ**, կոներում ուժ կար, տանը ծառա կար:(ՔԴ, էջ283)
- Բայց առաջվա քունն էլ չկար,անկողնում **տապակ-տապակ էր գալիս**:(ԻԲ, էջ283)
- Շան որդուն էնքան կծեծեմ , որ **լուլաքաբաբ կդառնա**:(ԷՏ, էջ406)

Եթե մի պահ պատկերացնենք, որ այս հարադրությունների փոխարեն Բակունցը գործածած լիներ գրական տարբերակները, ապա նրա հեղինակային խոսքն այսքան հյուսեղ և մտերմիկ չէր լինի: Եթե նշված հարադրությունները փորձենք փոխարինել գրական տարբերակներով, պատմվածքներըկդադարեն ակսեյան լինելուց:Հասկացությունը սեղմ, ճշտորեն և ժողովրդական մտածողությանը հարազատ ոգով արտահայտելու համար այս բառերն անփոխարինելի են:

Գրականագետ Ս.Աղաբաբյանը այսպես է բնորոշել Բակունցի լեզվական արվեստը. << Բակունցը ձգտում է դեպի խոսքի ժողովրդական հիմքերը, բայց ոչ թե արհեստականորեն ոճավորելով գեղջկական խոսվածքը, այլ օգտագործելովհայ գյուղացիների լեզվական ուրույն մտածողությունը՝ հնչերանգից ու բնորոշ շեշտից մինչև նրանց խոսքի կառուցվածքը>>:¹

Բակունցն իր գեղջուկ հերոսներին <<խոսեցնելիս>> վարպետորեն պահպանում է խոսքի գրական շունչը՝ միայն տեղ-տեղ գեղջկական երանգն ավելի ուժեղացնելով:

Հաճախ մի բառը կամ մի արտահայտությունը նախադասության կամ

¹Տես՝ Ս.Աղաբաբյան , Ակսել Բակունց , Երևան 1971,էջ 256

պարբերության մեջ թարմացնում են այդ զգացողությունը:

Ժողովրդախոսակցական բայական հարադրությունները երբեմն մի ամբողջ գրական նախադասության մեջ գործածելով՝ դրան տվել են ժողովրդախոսակցական բնույթ:Օրինակ՝

- Գյուղում նրան տեսնելիս տնազ էին անում:(ԵՎԲԹՏ, էջ357)
- Այդ ժամանակ քարատակում բազար չէին անում:(ԵԸ, էջ325)
- Աշխարհն այնպես խառնվեց, այնպես բորան եղավ, որ գցեց որտեղից որտեղ:(Մ, էջ332)

Երբեմն Բակունցը մի նախադասության մեջ միևնույն բարբառային բայական հարադրությունը կրկնել է, երբեմն էլ գործածել է այդ հարադրության գրական տարբերակը՝ դրանով սաստկացնելով ժողովրդախոսակցական բնույթը.

- Աթա ապերն այնպես էր սաբր գալիս, այնպես աղմուկով էր սաբր գալիս, որ մինչև անգամ փոստի տրակտով անցնողներըլսում էին նրա փռշտալը:(ԳՀ, էջ339)
- Զօր նստեց միտք արավ, չուրի լուս միտք արավ, թե ինչ հնարքով Լենին ջնջի հողի երեսից:(ՄԶ, էջ 365)

Բակունցը ժողովրդախոսակցական հարադրություններ է գործածել ոչ միայն իր հեղինակային խոսքում, այլև իր սիրելի հերոսներին խոսեցնելիս, որոնք խոսում են հիմնականում բարբառով: Հեղինակային խոսքը չի հակադրվում հեղինակային խոսքին: Հեղինակն արհեստականորեն կերպարին չի ձգում հասցնում հեղինակային մակարդակի. նա իր խոսքով և մտածողության եղանակով հաճախ ինքն է հարազատանում նրան: Բարբառային ձևերի օգտագործումը գրական համապատասխան հոմանիշ չունենալու հետևանք է, այլ նախապատվության խնդիր: Բարբառի օգտագործումը գեղարվեստական խոսքում սերտորեն առնչվում է կերպարների խոսքի տիպականացման հետ:

Օրինակ՝

- -Հենց գիտես, թե դատ ու դատաստան չկա, էլի՞, որ գոռ ես անում,-ասաց Մանասը:(Օր, էջ 98)

- -Չեմ կարա ասի, լեզուս պատ չի տամ ասեմ:(ԳՀ, էջ 95)

Բակունցի հեղինակային խոսքում գործածված մի շարք ժողովրդական - բարբառային հարադրությունների կարևորությունը զգացվում է մանավանդ գյուղատնտեսական աշխատանքի որոշ նկարագրություններում, որոնք լայն կիրառություն են գտել << Քեռի Դավոն >> պատմվածքում.

Բակունցի հեղինակային խոսքում գործածված մի շարք ժողովրդական - բարբառային հարադրությունների կարևորությունը զգացվում է մանավանդ գյուղատնտեսական աշխատանքի որոշ նկարագրություններում, որոնք լայն կիրառություն են գտել << Քեռի Դավոն >> պատմվածքում.

- Կա տափ, կա բամբակի աղաթ, պետք է որոշել, թե որ պատանին ձեռնհաս է **հորիկ լինելու**:(էջ 275)
- Եվ դեռ հարյուրավոր հարցեր, թե ինչպես սերմել, որ արտերում անսերմ խեց չմնա, որ հողի բոլոր գուղձերը փշրվեն, ով է քաղցր հնձում, ով է լավ **սառու քաշում, լար տալիս, մարգոց անում**:(էջ 275)

Այս հարադրությունները չունեն նույնարժեք զուգահեռներ և կազմում են մեր բառազանձի կարևոր մասը:

Երբեմն բայական հարադրությունների ժողովրդախոսակցական իմաստը շեշտում է բայական բաղադրիչը, հատկապես անցյալ կատարյալի ձևերում.

- Եվ բատրակը **թույլ տվավ** իրեն իրեն մինչև այն աստիճան:(ՄՁ, էջ 359)
- Տիտոսը պառկած տեղից **ձայն տվավ**, թե ինչ է փնտրում:(ԸԸ, էջ 319)
- Սաքանը մատով **ցույց տվավ**:(ՄՁ, էջ 107)
- Սաքանը թեթև հագաց, թուրքը **կուլ տվավ**, և հայացքը Ասայային գցեց:(ՄՁ, էջ 409)

Ժողովրդախոսակցական բնույթի են նաև այն հարադրությունները, որոնցում <<է>> օժանդակ բային փոխարինում է <<ա>> ժողովրդախոսակցական մասնիկը.

- Հենց էն ա **բերանը ման ա ածում**, թե որ քյասիբի թիքան կոլ տա:(Ձ, էջ 96)
- Ցավը, որդի պես, սաղ ջանով **ման ա գալիս**:(ԽՊ, էջ 88)
- **Դուր ա գալիս** զուռնի հավեն, զուռնի ձենը **ոսկորի մեջ ա մտնում**:(ԽՊ, էջ 91)

Բակունցի հեղինակային խոսքում տեղ գտած ժողովրդական բնույթի շարահյուսական միջոցներից կարելի է հիշատակել նաև բարբառներին հատուկ այն երևույթը, երբ ստորոգյալն ու նրա ձևական խնդիրը նույն բառարմատից են կազմված.

- Սոնան մեռավ երեխայի վրա, և **լաց լացին** նրա մայրը,ամուսինը, բարեկամները:(Մհ , էջ 76)
- Արտերը հնձել վերջացրել էին, գյուղը **կալ էր կալսում**:(ԲԲ, էջ 292)
- **Երգ էր երգում** սայլապանը, այնքան մեղմ...(ԽԱ, էջ 116)

Բակունցն իր մայրենի բարբառից վերցրել է գունային բայական հարադրություններ, որոնք նրա խոսքին յուրահատուկ ճոխություն են տալիս.

- Գարնանը արևը հալեցնում է ձյունը Այու սարի, և կողերը քարոտ **սևին էին տալիս**:(ԱՍԼ, էջ 56)
- Սարի տակին **սալիտակին էր տալիս** խոտհարքը:(ԲԲ, էջ 308)
- Մի քանի կտուրների վրա **դեղինին են տալիս** դդումները:(ԲՏ, էջ172)
- Զայրույթից չեչաքար երեսը **կարմրին էր տալիս**:(Թգ, էջ 74)

Երբեմն հեղինակը ժողովրդախոսակցական բայական հարադրության մի մասը կրճատում է՝ ավելի շեշտելով իմաստային յուրահատկությունը.

- Հրեն Գիշունց պառավը երկու տարի **աղաստ- պաղաստում** է հոգին առնես:(ԵԸ, էջ347)

Հետաքրքրական է, որ <<Միրհավը>> պատմվածքում Բակունցը , նկարագրելով Դիլան դայու հոգեվիճակը, շատ էկիբառում միևնույն բայական հարադրությունը:Ենթադրում ենք, որ դա ինքնանպատակ չէ և բացահայտում է կերպարի մութ կողմերը:Օրինակ՝

- Քայլում էր Դիլան դային, հնձած արտերն էր **կոխ տալիս**:(էջ 76)
- Արահետը բարակում էր, վերջին արտերն էր **կոխ տալիս**:(էջ77)
- Դիլան դային **կոխ էր տալիս** չորացած տերևները:(էջ 78)

Բակունցի լեզվին յուրահատուկ երանգ են տալիս նաև հարադրական բայերով արտահայտված օրինանքները, անեծքները.

- -Ալլա՛հ, **հոգիս ա՛ն**, -ասաց ու հենվեց պատին:(ԷՏ, էջ 407)
- **Շ՛են կենա** մեր կոպերատիվը:(ՕՏՊ, էջ 84)
- -Ծատու տղա, **նգովյալ լինես**, եթե շվաքդ անպակաս անես էս օջախին:(ՕՏՊ , էջ 409)

Բարբառային բառին կյանք տալը գրական լեզվի պահանջն ու սկզբունքն է: Իսկ գեղարվեստական լեզուն բավարարվում է նրանով, որ բարբառային բառը շնորհքով ու տեղին գործածված լինի, նպաստի գրողի խոսքի անհատականացմանը:¹

Այսպիսով, մենք փորձեցինք ցույց տալ Բակունցի կիրառած ժողովրդախոսակցական յուրահատուկ իմաստ և բազմազանություն ցույց տվող բայական հարադրությունների ոճական-իմաստայինկիրառությունները՝ բերելով համապատասխան օրինակներ: Ոճական արժեքով օգտագործված ժողովրդախոսակցական հարադրությունները պետք է գնահատվեն ոճական չափանիշներով:

¹Տես՝Ս.Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության,Երևան 1984, էջ 114

Գլուխ 3

Դարձվածային բայական հարադրությունների ոճական արժեքը

Դարձվածքները ժողովրդի դարավոր մտածողության, կենսափորձի, աշխարհաճանաչման սեղմ ու պատկերավոր արտահայտություններ են, ժողովրդախոսակցական լեզվի մարգարիտներ, որոնք լեզվին տալիս են ազգային ինքնություն, արտահայտչական բազմազանություն, հուզական երանգ: Մեծ է դարձվածքի դերը խոսքի գեղեցիկ դրսևորման մեջ: Դարձվածային միավորներն իրենց ձևով և իմաստով շատ են նմանվում հայերենի հարադիրներին: Դրանց տարբերակումը շատ դժվար է: Այս հարցը քննել է Ս.Մելքոնյանը:Նա նշում է, որ դարձվածքներին սովորական հարադիրների հիմնական տարբերությունը վերաբերում է դրանց իմաստային կողմին: Եթե հարադիրներին հատուկ է ուղղակի իմաստը, դարձվածքները վերաիմաստավորված միավորներ են:

Թումանյանից հետո հայ ժողովրդական լեզվի այս հարստությունն օգտագործելու իր համարձակ օրինակն է տվել Ակսել Բակունցը: Դրանով նրա հեղինակային խոսքն էլ ավելի արտահայտիչ է դարձել: Բակունցը համոզված էր, որ գրական լեզուն ժողովրդայնացնելու համար պետք է դիմել կենդանի խոսքին , վերցնել նրանից դարձվածային հարստություն, ոճեր, բառեր, դիպուկ և թևավոր արտահայտություններ, առածներ, ասացվածքներ, դրանց մեջ կատարել ընտրություն, գրական տեսք տալ և օգտագործել կերպարների խոսքում: Բերենք օրինակներ.

- Մի օր քաղաքից լուր բերին, թե թագավորին թախտից **վեր են բերել**:(ՎԲ, էջ 45)
- Նստել էր ու **միտք էր անում**՝ականջը սիմինդրի տերևների խշշոցին:(ՄԿ, էջ 73)
- Մանասին տարան, ինչ ասես չարին, **վիզ չառավ**:(Օր, էջ 101)
- Ժողով պիտի անեն, հին արածները **երեսով տան**:(ՔԴ, էջ 275)
- -Լեզվիս պտկին էր, ասում էի, որ **մտահան չանեմ**:(ՆՌԹ, էջ 158)

Դարձվածային բայական հարադրությունների մեծ մասը կազմվում են մարմնի մասերի անվանումներով: Դրանցից Բակունցը շատ է գործածել գլուխ, սիրտ, թև, ձեռք, աչք, ականջ հարադիրներով կազմված դարձվածային հարադիր բայեր: Մեծ թիվ են կազմում սիրտ անել, սիրտ տալ, սիրտը առնել բայական հարադրությունների գործածությունը, որոնք նշանակում են համարձակվել, գոտեպնդվել, հույս տալ:

- Մի քանի հոգի **սիրտ արին** և մոտեցան:(ՆՌԹ, էջ 163)
- Երբ վրանի մոտ նա լսեց մոր բոբիկ ոտքերի ձայնը, զգեստի խշշոցը, **սիրտ առավ**, խորոված մի սունկ հանեց մոխրից և դրեց օջախի քարին:(Ա, էջ 139)
- Անտոնը **սիրտ էր տալիս**, թե առաջին անգամ այդ էլ շատ է:(ԽԱ, էջ 119)
- Բաղին **սիրտ արավ**, սկսեց իր ցավը պատմել:(ՎԲ, էջ 47)
- Վանդունց Բաղին ինքն իրեն **սիրտ տալ** սկսեց:(ՎԲ, էջ 42)
- Երբ Շարմաղ բիբին եկավ, երեխաները **սիրտ առան**:(ՍՁ, էջ 215)

Ոճական նույն արժեքն ունեն աչք, ականջ հարադիրներով կազմված դարձվածային հարադրությունները, որոնց իմաստը կախված է մարմնի այդ մասերի կատարած ֆունկցիայից, այն է՝ լսելու և տեսնելու:

- Մանասը բոստանատեղ էր փորում, երբ **ականջովն ընկավ** այդ:(Օր, էջ 99)
- Քմծիծաղ էր տալիս Թանգին, երբ **ականջին էր հասնում** գյուղի խոսքը:(Թգ, էջ 73)
- Մեկ էլ ետ նայեց, ու նրա **աչքին ընկավ** մառանի բաց դուռը:(ԲԲ, էջ 316)
- Երբ պառավի **աչքովն էր ընկնում** ամուսնու մաշված արմունկը, զրույցը կիսատ էր թողնում:(Ս, էջ 326)

Բազմաթիվ են նաև գլուխ հարադրով կազմված դարձվածային հարադրությունները.

- Պետին **գլխի ընկավ**, որ սև ցավ է:(ԱՍԼ, էջ 58)
- Աթա ապերն զգում էր, որ նրանց հետ դժվար է **գլուխ դնել**:(ԵԸ, էջ 344)
- Մի ուրիշը խոնարհ **գլուխ է տալիս**:(ԳՀ, էջ 95)
- Տունը զարդարում էին, **գլուխ տալիս** եկվորին, ներս տանում:(ԱՍԼ, էջ 62)

Ոճական յուրահատուկ արժեք ունեն ձեռք, թև հարադիրներով կազմված հարադիրները.

- Ասյան ցտեսություն ասեց Սաքանին,**ձեռք տվալ**,իջավ ճանապարհով:(ՄՉ, էջ 113)
- Նրան **թև էր տալիս** այն միտքը, որ շուտով արև պիտի ծագի:(ԸԸ, էջ 319)
- Վիրավոր միրհավը **թևին տվեց**,թռավ վեր:(Մհ, էջ 78)

Բակունցի լեզվին յուրահատուկ գեղեցկություն են տալիս միտք հարադրով կազմված հարադրությունները:Նրա բոլոր կերպարները մտածող, խորհող անձինք են: Օրինակ՝

- **Միտք էին անում** էգուցվա մասին գոհ ու բախտավոր:(ՎԲ, էջ 36)
- Կռացնում էր գլուխը, **միտք անում** երկար, մինչև քունը հաղթեր:(ԱՍԼ, էջ 62)
- Հնձվորը **միտք արեց**, ուսը քորեց և դարձավ դեպի ձորը:(ԱՄ, էջ 137)
- **Միտք չէր անում**, որովհետև դատարկ էր ոչ միայն վաղը, այլև այսօր:(ԻԲ, էջ 294)

Որոշ դարձվածային հարադրություններ արտահայտում են բարեմաղթանք, օրհնանք.

- -**Շեն կենա** մեր կոպերատիվը:(ՄՏդ, էջ 84)
- -**Շեն մնաս**, - ասաց նա սելվորին:(ԳՎ, էջ 85)
- -Ալլա՛հ, **հոգիս ա՛ռ**, - ասաց ու հենվեց պատին:(ԷՏ, էջ 407)
- -Մեզ համար մի **լույս ծագի**, - ինչպես ասում էր Թանգին:(Թգ, էջ 76)

Մենք փորձեցինք ցույց տալ, թե ինչպիսի ոճական- իմաստային արժեք են տվել դարձվածային հարադրությունները Բակունցի խոսքին, ինչպես են դրսևորվել և իմաստային ինչ նրբերանգներ են արտահայտում:Այս հարադրությունները լավագույնս արտահայտում և արտացոլում են հայ ժողովրդի պատկերավոր մտածողությունը, կյանքը, հայացքները: Դրանք հեղինակի լեզուն դարձնում են կենդանի և շարժուն :Իրենց բազմազանությամբ արտահայտում են տարբեր բնույթի յուրահատուկ նշանակություններ՝ պայմանավորելով դարձվածաբանական այն բացառիկ արժեքը, որ ներկայացնում են հայոց լեզվի մեջ:

Գլուխ 4

Մենիմաստ և բազմիմաստ հարադիր բայերի ոճական արժեքը

Յուրաքանչյուր լեզվի կարևոր հատկություններից մեկը բառի բազմիմաստությունն է: Լեզվի այս հատկությունն ավելի բնորոշ է բանավոր խոսքին. այնտեղ է, որ բառը, նորանոր կիրառություններ ստանալով, նոր իմաստներ է ձեռք բերում: Մի շարք բառերի բազմիմաստություն գալիս է հին խոսակցական հայերենից, և պատահական չէ, որ հետագայում գրաբարը մնաց գրոց լեզու: Գրաբարյան բառերի նորանոր, հավելյալ իմաստներ ստանալու ընդունակությունը նվազեցկամ, գուցե, վերացավ: Մինչդեռ բարբառները շարունակում էին զարգանալ, որի կարևոր արտահայտություններից էր բառերը նորանոր իմաստներով գործածելը: Ահա խոսակցական հայերենի այս հարստությունը ժամանակին առավելագույն չափով չթափանցեց նոր գրական հայերենի մեջ, քանի որ այդ լեզուն մշակող գրագետները բառիմաստների խնդրում երբեմն ավելթող հավաստարմություն էի ցուցաբերում գրոց լեզվի ավանդների նկատմամբ:¹

Հայոց լեզվի բառապաշարի ուրույն շերտերից մեկը լինելով՝ հարադիր բայերը կարող են մեկից ավելի իմաստներ արտահայտել: ըստ այդմ էլ դրանք բաժանվում են երկու խմբի՝ մենիմաստ և բազմիմաստ հարադրավոր բայեր:

Այլ. Մարգարյանը նկատում է, որ միանշանակությամբ մեծ մասամբ աչքի են ընկնում ձայնարկությամբ և ածականով արտահայտված հարադիր ունեցող

բայերը: Այդպիսի հարադիրներով բայեր Բակունցի մոտ քիչ են հանդիպում: Բերենք մի քանի օրինակ.

- Գարնանը արևը հալեցնում էր ձյունը Այու սարի, և կողերը քարոտ **սևին էին տալիս** : (ԱՄԼ, էջ 56)
- Արևը **կարմրին էր տալիս**, սովերներ կախում ճանապարհի վրա: (ԲԲ, էջ 316)

¹Տես՝ Ալ. Մարգարյան, նշվ. աշխատություն, էջ 234

- -Ծատու տղա, նզովյալ լինես, եթե **շվաքղ անպակաս անես** էս օջախին: (ՕՏՊ, էջ 409)
- Մեկ էլ զարթնում էր, մյուս կողքին դառնում ու անլեզու կնոջը հրոմ, **քնահարամ անում**: (ՕՏՊ, էջ 410)

Հայերենում ավելի բազմազան արտահայտություններ ունեն բազմանշանակ հարադրավոր բայերը և դրանց մեջ էլ հատկապես նրանք, որոնք աչքի են ընկնում լայն ու հաճախակի գործածությամբ: Այդպիսի բայերից են՝ անց կենալ, բաց անել, բաց թողնել, դուրս գալ, վրա տալ, որոնք կարող են արտահայտել մինչև տասնհինգ նշանակություն: Հարադրական բայերը, բազմազան իմաստներ արտահայտելով, ընդարձակում են բայ խոսքի մասի իմաստային շրջանակները:

Բակունցը բայական հարադրությունների բազմիմաստ կիրառության մեծ վարպետ է, ինչը նրա լեզվին տալիս է բազմազանություն: Նա տարբեր իմաստներով գործածել է ձեռք տալ, ման գալ, դուրս գալ, վեր գալ, վրա տալ, շուռ տալ բայական հարադրությունները:

Ձեռք տալ բայական հարադրությունը գործածել է հրաժեշտ տալ, դիպչել, ողջունել, սիրահետելու իմաստներով: Օրինակ՝

- Առավոտյան նրան բարի ճանապարհ ասացին, մոտեցան **ձեռք տվին**: (ՕՏՊ, էջ)
- Ասյան ցտեսություն ասաց, **ձեռք տվավ** և իջավ ճանապարհով: (ՄՉ, էջ 123)
- Պետին վախենալով **ձեռք տվավ** հրացանին, ձեռքը ետ քաշեց, կարծես կրակ էր, այրեց: (ԱՄԼ, էջ 164)
- Մեկն ամպի միջից վազում է, **ձեռքով անում**: (ԲՏ, էջ 77)

- Մի անգամ պիսիքը Խաչումենց հարսին **ձեռ էր տվել**, հարսն էլ լացակումած հեռացել էր:(ՎԲ, էջ 37)

Ման գալ հարադրությունը գործածել է զբոսնել , փնտրել, երբեմն էլ ապրել իմաստներով:Օրինակ`

- Հաբուդը չէր սիրում, երբ հայրը **ման էր գալիս** կալերում և իր բաժին ցորենն առնում:(ՎԲ, էջ 35)
- Օրվա այդ ժամին նա **ման էր գալիս** գոմից գոմ, ապրանքին նայում:(ԱՍԼ, էջ 58)
- Էն օրը տերտերն ինչքան **ման եկավ** գրքերում, չգտավ:(ՍՁ, էջ 218)
- Մի քիչ էլ **ման եկավ**, պախրայի հետք տեսավ, փնտրեց ու չգտավ:(ՄԹ, էջ 30)
- Աքարում աչքացավ կա, և երեխաներն արևաքոռ են **ման գալիս**:(Աք, էջ 49)

Դուրս գալ հարադրությունը գործածել է գնալու, ասածը չանելու, երբեմն էլ մտնելու իմաստներով:Օրինակ`

- **Դուրս եկավ**, ճոճեց մարմինը բարակ, որպես եղեգև կաքավի մանր քայլերով սուրաց դեպի հնձանը:(Մհ, էջ 47)
- Ով կարար նրա դեմ խոսեր, նրա դեմ **դուրս գար**:(ՎԲ, էջ 42)
- Միմոնը տիղմի բարակ շերտով ծածկեց, ապա համետեց ձին և **դուրս եկավ** ճանապարհը:(ՄՉ, էջ 226)

Վեր գալ հարադրությունը գործածել է խոսք բացվելու և ինչ-որ բանի ընդունակություն ունենալու իմաստներով:Օրինակ`

- Այդ մասի շատ բան են պատմում, երբ խոսք է **վեր գալիս** Օրանջիայի մասին:(Օր, էջ 101)
- Մի խոսքով, ամեն բան ձեռքովս **վեր է գալիս**:(ՍՀ, էջ 208)

Վրա տալ հարադրությունը գործածել է հարձակվել, երբեմն էլ մոտենալու իմաստով:Օրինակ`

- Ու մեկ էլ զինվորները **վրա տվին**, ձիու համետն արձակեցին և շպարտեցին Աքելի կողմը:(ՍՀ, էջ 228)
- Երագում էլ սարում արածող ոչխարի հետն էր. գայլն էր **վրա տալիս** ինքը քնի մեջ մոնչում էր:(Օտդ, էջ 410)

- Երբ ազոավի ծերտ ենք տեսնում, **վրա ենք տալիս**:(ԵԸ, էջ 338)

Շուռ տալ հարադրությունը գործածել է թեքելու, պտտելու և որևէ փոփոխության իմասներով: Օրինակ՝

- Երբ մութ եղավ, քնեցին, կինը կամացուկ խնդրեց շապկացու, սիրտ արեց, մոտեցավ մեջքին, բայց Ծատուն տղան երեսը **շուռ տվեց**:(ԾՏդ, էջ 410)
- Մի գարուն էլ **շուռ տվեց**, և այդ գարնանը քաղաքից հողաչափ եկավ՝ երկու գյուղի սահմանները որոշելու:(ԾՏ, էջ 71)

Այսպիսով, բերված օրինակները պարզ ցույց են տալիս, որ իմաստային մեծ հարստություն ունեն հարադիր բայերն իրենց ընդհանուր, մասնավոր, երկրորդական և նրբերանգային բազմատեսակ իմաստներով ոճաբանական բացառիկ մեծ արժեք են ներկայացնում հայոց լեզվում: Այս իմաստները, իհարկե, Բակունցը չէ, որ դրել է նրանց մեջ, այլ ժողովուրդը, իսկ Բակունցը այս դեպքում միայն վերցրել է արդեն ստեղծվածը:

Բայերի՝ տարբեր իմաստներով գործածությունը շոշափելի է դարձնում արտահայտվող միտքը, ճիշտ ներկայացնում տվյալ իրողությունը: Միևնույն բառին նորոնոր իմաստներ վերագրել, որ ժողովրդական խոսքի հարստություններից է, ճոխացման աղբյուր կարող է լինել գրական լզվի համար, և այդ աղբյուրից հմտորեն օգտվող հեղինակի՝ տվյալ դեպքում Բակունցի լեզուն նոր թարմություն և առույգություն է ստանում:

Եզրակացություն

Ակսել Բակունցի պատմվածքներն առանձնանում են իրականության գեղարվեստական արտացոլման յուրահատկությամբ, զարմանալի սեղմությամբ, բայց միաժամանակ պարզությամբ, որը լեզվի արտահայտչականության և պատկերավորության գլխավոր չափանիշներից է: Բակունցն իր խոսքին պատկերավորություն և արտահայտչականությունտալու նպատակով օգտագործել է ոճական մի շարք հնարներ: Նրա խոսքի ժողովրդայնությունն կարևոր գործոնը բայական հարադրությունների առատ գործածությունն է: Բայական հարադրությունները ժողովրդական խոսքի բնորոշ բաղադրիչն են: Դրանք անսահմանորեն հարուստ են իրենց արտահայտչական հնարավորություններով և պատկերավորությամբ:

Բակունցի պատմվածքներում մեծ թիվ են կազմում ժողովրդախոսակցական-բարբառային բայական հարադրությունները, որոնց միջոցով հեղինակը ցույց է տվել հայ գյուղի ամենաթաքուն անկյունները, գյուղացու կյանքն ու մտորումները: Հաճախ միայն ժողովրդախոսակցական բայական հարադրության գործածությամբ է ստեղծել գյուղական միջավայրի հարազատությունը: Բակունցն իր գեղջուկ հերոսներին խոսեցնում է՝ պահմպանելով լեզվի գրական շունչը:

Բակունցի գործածած ժողովրդախոսակցական բայական հարադրությունների մեջ ոճական մեծ արժեք ունեն այն հարադրությունները, որոնց հարադիրն ու բայական մասը կազմված են նույն արմատից: Սրանք խոսքին տալիս են աշխուժություն:

Ոճական յուրահատուկ արժեք ունեն օրինանք, անեծք, բարեմաղթանք արտահայտող հարադրությունները:Բսկ հաճախակի գործածված գունային հարադրությունները շքեղացնում են հեղինակի բառապաշարը:Առանց դրանց դժվար է պատկերացնել Բակունցի հեղինակային խոսքը:

Բակունցի լեզվում մեծ խումբ են կազմում դարձվածային բայական հարադրությունները:Դարձվածային մավորներն ու դարձվածային հարադրությունները լեզվական տարբեր միավորներ են և նույնանում են միայն արտահայտության պլանում:Մովորական հարադիրի իմաստը գոյանում է նրանց բաղադրիչների իմաստի գումարից, իսկ դարձվածային հարադրությունների իմաստը բաղադրիչների իմաստից տարբեր է:Դարձվածային բայական հարադրությունները ժողովրդական լեզվամտածողության հարազատ արտահայտություններ են, խոսքի համար պատրաստի շինանյութ, որոնցից առատորեն օգտվել էԲակունցը: դարձվային հարադրությունների գործածությամբ հեղինակն արտահայտչականության, պատկերավորման և երանգավորման իր կնիքն է դրել խոսքի ոճավորման վրա:Դրանց տեղին գործածությունը հեղինակի խոսքը դարձրել են կենդանի և ազդեցիկ:

Բակունցի խոսքում միևնույն բայական հարադրությունը , իմաստային տարբեր կիրառություններ ստանալով, ձեռք է բերել բազմիմաստություն:Բազմիմաստ բայական հարադրությունների միջոցով հեղինակն այնպիսի նրբերանգներ է արտահայտել, որ հաճախ դժվար է դրանք ամբողջապես ընկալել: Միևնույն բառին տարբեր իմաստներ տալը ժողովրդական խոսքի հարստություններից է և բառապաշարի հարստացման միջոց:Դրանց միջոցով Բակունցի լեզուն ստացել է ոճական բազմազանություն , առույգություն և թարմություն:

Բայական հարադրությունների առատ գործածությունը թույլ է տվել Բակունցին իր խոսքն օժտել բանաստեղծականությամբ , արտահայտչականությամբ, պատկերավորությամբ, ժողովրդայնությամբ, կերպարների և միջավայրի անհատականությամբ:

Համառոտագրությունների ցանկ

(Աձ)- <<Անձրևը>>

(ԱՄ)- <<Ալպիական մանուշակ>>

(Աք)- <<Աքարում>>

(ԲՏ)- <<Բրուտի տղան>>

(ԱՍԼ)- <<Այու սարի լանջին>>

(ՀՏ)- << Հինն տարին>>

(ՔԴ)- <<Քեռի Դավոն>>

(ԵԸ)- <<Եղբայրության ընկուզենիները>>

(Օր)- <<Օրանջիա>>

(Թգ)- <<Թանգին>>

(ԼՄ)- <<Լառ-Մարգար>>

(Իսդ)- <<Իսադլացավ>>

(ԾՓ)- <<Ծիրանի տափը>>

(ՍՁ)- <<Սպիտակ ձին>>

(ՀՁ)- <<Հյումբաթի ձորը>>

(Մ)- << Մայրը>>

(ՄԲ)- <<Մինա բիբին>>

(Մհ)- <<Միրհավ>>

(Մթ)- <<Մթնաձոր>>

(ՄՉ)- <<Մթնաձորի չարքը>>

(Մր)- <<>Մրոց>

(ՎԲ)- <<Վանդուց Բաղին>>

Օգտագործված գրականության ցանկ

1. Դ.Գասպարյան , Բակունցի պատմվածքների գեղագիտական աշխարհը, Երևան 1979
2. Ալ.Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966
3. Մ.Չամչեանց, Քերականութիւն հայկազեան լեզուի, Ի Տփղիս, 1824
4. Խ.Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1950
5. Ա.Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա,
6. Ս.Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1952
7. Ա.Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962
8. Լ.Հախվերդյան, Ջրույցներ լեզվի մասին, Երևան, 1982
9. Լ.Եզեկյան , Ոճագիտություն, Երևան 2003
10. Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ.4, Երևան 1951
11. Ս.Աղաբաբայան , Ակսել Բակունց , Երևան 1971
12. Ս.Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան 1984

